

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ՑՈՒՑԱԴՐԵԼԸ ՔՆՆՈՒԹԻՒՆ Է

ԱՐԱՄ ԻՍԱԲԷԿԵԱՆԻ ԵՒ ՍԱՐՕ ԿԱԼԵՆՑԻ

ԶՈՅԳ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Փարիզի Cité Internationale des Arts-ին Հայաստանի վերապահ-ած անկիւնը կարծէք Հայ նկարիչներու փոքրիկ բոյնի վերածուած է, ուր մէկը միւսին փոխարինելով, Հայ արուեստագէտները ամիսներ կ'անցընեն Հոն, արուեստի այս մեծ քաղաքին մէջ՝ մէկ կողմէ Համաշխարհային արուեստին մօտէն ծանօթանալու եւ միւս կողմէ իրենց արուեստը ներկայացնելու առաջադրանքով:



Արամ Իսաբէկեան

Նոյեմբերէն ի վեր Փարիզ կը գտնուին երկու ծանօթ Հայ գեղանկարիչներ՝ Արամ Իսաբէկեան եւ Սարօ Կալենց: Առաջինը երեք տասնեակէ աւելի գործ բերած է իր Հետ, մեծ մասամբ կրաֆիք աշխատանքներ եւ հինգ իւղանկարներ: Իսաբէկեան կ'ըսէ. «Ձեմ սիրէր մնայ միշտ միեւնոյն ոճի սահմաններում մէջ, կը փնտռեմ ու կը գտնեմ նոր արտայայտչամիջոցներ»: Նկարիչը իր աշխարհընկալումը տարբեր կերպերով կը յանձնէ կտաւին ու այդպիսով կը խօսի ահնդիրին հետ: «Կան պատմողական բնոյթի գործեր, կան նաեւ մեթաֆիզիքական աշխատանքներ, որոնք աւելի շատ գոտս նկարչական խնդիրներու լուծման կը ծառայեն», կ'ըսէ ան:

Իսաբէկեան աւարտած է Երևանի գեղարուեստ-թատերական ինստիտուտը եւ ապա դասաւանդած է միեւնոյն Հաստատութենէն ներս ու Հասած է փրոֆեսորի տիտղոսին: Իսկ այժմ, ան գեղարուեստական հիմնարկի տնօրէնն է: Հայաստանի մէջ ծանօթ այս նկարիչը Հայրենիքի թէ նախկին Խորհրդային Հանրապետութիւններու տարածքին, ինչպէս նաեւ Հալէպ եւ Դամասկոս, ներկայացուցած է անհատական ցուցահանդէսներ, իսկ աշխարհի զանազան երկիրներու մէջ մասնակցած է հաւաքական ցուցահանդէսներու: Խօսելով Հայաստանի արուեստի այսօրուան վիճակին մասին, ան կ'ըսէ. «Եթէ Հայաստան իբրեւ փոքր երկիր կ'ուզէ աշխարհին հետ քայլ պահել, ապա պէտք է ներկայանայ իր արուեստով, պէտք է զարգացնէ զայն եւ ըլլայ արուեստ մատակարարող երկիր»:

Ինչ կը վերաբերի, Սարօ Կալենցի, ան Արամ Իսաբէկեանի գործընկերն է, նոյն ուսումնարանէն


չըջանաւարտ եւ այժմ դասախօս ու ամպիոնի վարիչ: Կալենց իր առաջին քայլերը նկարչութեան մէջ առած է իր իսկ ընտանիքէն ներս, հօրը՝ Յարութիւն Կալենցի հոգածութեան տակ, որ ծանօթ գեղանկարիչ է եւ միշտ շրջապատուած եղած է Հայ մտաւորական ծանօթ դէմքերով:

Ցուցահանդէսին Կալենց կը ներկայացնէ իր վերջին շրջանի 12 գործերը, որոնք ծնունդ առած են Հայաստանեան կեանքի ծանր պայմաններու ազդեցութեան տակ՝ մութին, ցուրտին, բայց միաժամանակ ներքին ուրախութեամբ, Հայրենիքը անկախ տեսնելու երջանկութեամբ:

Նկարիչը անդրադառնալով իր ոճին, կը խօսի իր ձգտումներուն մասին: Ան տարբեր ոճերը կը գնա-

հատէ իբրեւ մէկ ամբողջութեան մասնիկներ, ուստի իր ստեղծագործութիւններուն մէջ կ'աշխատի ըստեղծել անոնց հաւաքականութիւնը, ընդհանրացումը: Եւ այդպէս է իրաւամբ: Անոր կտաւները անմիջապէս կը յուշեն իւրօրինակ գերիբապաշտութիւն, վարպետ վրձինով ու բարձր որակով:

Կալենց եւս իր գործերը



Սարօ Կալենց

ցուցադրած է զանազան երկիրներու մէջ, անհատական թէ հաւաքական ցուցահանդէսներով:

Դեկտեմբեր 14-էն մինչեւ 23, Հետաքրքրական անհատակութիւն ունեցող այս զոյգ նկարիչները իրենց գործերը կը ցուցադրեն Cité Internationale des Arts-ի René Verger սրահին մէջ. եւ ինչպէս Կալենց ինք կ'ըսէ՝ Փարիզի մէջ ցուցադրելը քննութիւն է, որուն պիտի դիմանանք:

ԿԱՐԻՆԷ Մ.ՂԱՌՈՒԱԶԵԱՆ

21. 17 Դեկտեմբեր 1995, Փարիզ

Հասցէ.- Cité Internationale des Arts - 18, rue l'Hôtel de Ville 75004 Paris - Métro: Pont-Marie